

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 30/4

ք.Երևան

1 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ Խոշոր և միջին հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 27.02.2018թ. N1013033 ակտի դեմ «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի կողմից դիմում-բողոք է բերվել ՀՀ ԿԱ ՊԵԿ Խոշոր և միջին հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 27.02.2018թ. N1013033 ակտի դեմ:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը ներկայացնող հարկ վճարողը նույն պահանջով դիմել է դատարան:

Քննարկվող դեպքում «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի կողմից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Խոշոր և միջին հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 27.02.2018թ. N1013033 ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի 05.05.2018թ. որոշման համաձայն հայցադիմումն ընդունվել է վարույթ (վարչական գործ թիվ ՎԴ/5083/05/18):

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:
Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

Դ.ԱՆԱՆՅԱՆ

